

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐԱՆՁԱԽԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆԵՐՔԻՆ ՅԱՐԴԱՐԱՆՔԸ

Մարդու գոյատեւման եւ կենցաղավարման գլխաւոր նախապայմաններից մէկը նրա բնակելի միջավայրն է: Նախապատմական Հին քարեդարեան ժամանակաշրջանի բնական քարանձաւները մարդու առաջին կացարաններն են: Այս միջավայրում են ձեւաւորուել եւ զարգացում ստացել մարդկային բնակչութեան կենցաղի, սովորոյթների, աշխարհայեացքի եւ շրջակայ միջավայրի առաջին պատկերացումները, որ դիպուկ արտայայտութեամբ բնորոշւում է որպէս «Քարանձաւային մշակոյթ»:

Քարանձաւային մշակոյթը կարելի է բաժանել երեք փուլի:

Մինչեւ առաջին սառցապատման ժամանակը եւ համայնական կարգի ձեւաւորումը, քարանձաւները ողջ աշխարհում մեծ մասամբ գործածուել են ժամանակաւորապէս կամ ընդհատումներով¹: Որոշ դէպքերում, երբ բարենպաստ պայմաններով բիոտոպերը թոյլ են տուել դրանք զբաղեցնել հազարամեակներով, նախամարդիկ կարողացել են հաստատուել եւ զարգացում ապրել, յայտնագործել եւ կատարելագործել զէնքերը, գործիքները, կենցաղային այլ առարկաները:

Քարանձաւների ներքին տարածքների կազմակերպումը կապուած էր տուեալ տարածաշրջանի կլիմայական եւ բնական պայմանների հետ, ինչպէս նաեւ յարմարեցված էր բնակիչների կարիքներին: Այդուհանդերձ, նկատելի են որոշ ընդհանրացումներ. գրեթէ բոլոր այստեսակ քարանձաւներում կայ մեծ նախական բոլորածեւ կամ ուղղանկիւնաձեւ սրահ, որտեղ զետեղուած է օջախը, որից միջանցքները տարածւում են դէպի կողմնակի «սենեակներ» կամ մեծ ու փոքր սրահներ:²

1 Всеобщая история архитектуры (ВИА), I, Москва 1970, 20-21.

2 Ա.Ա.:

Քարանձաւային բնակութեան երկրորդ փուլը նշանաւորուում է դրանք ժամանակաւոր պատասպարանից կացարանի վերածման գործընթացով, որն ընթանում է որսորդութիւնից եւ հաւաքչարարութիւնից անասնապահութեան եւ հողագործութեան անցնելու երեւոյթին զուգահեռ: Փոխւում է մարդու վերաբերմունքը քարանձաւի նկատմամբ, նա սկսում է ձեւափոխել եւ իր առօրեայ կարիքներին առաւելագոյնս յարմարեցնել դրանց ներքին տարածքները:³

Արտաքին վտանգներին եւ աղետներին դիմագրաւելու կարողութեան առաջընթացով եւ հնարաւորութիւնների բազմապատկմամբ, ինչպէս նաեւ հասարակական յարաբերութիւնների զարգացման եւ ընտանիքների ստեղծման արդիւնքում, մարդիկ սկսեցին լքել մեծ քարանձաւները եւ բնակութեան համար փնտռել կամ էլ փորել աւելի փոքր ծաւալով այրեր: Մեծ քարայրներն սկսեցին օգտագործուել որպէս փարախներ, պահեստներ կամ ծխական սրբատեղիներ: Այս՝ երրորդ փուլում, որ թուագրւում է Ուշ-քարեդարով կամ Օրինեակ-Սուլիտրե-Մադլենեան մշակոյթների ժամանակաշրջանով (Ք.ա. 10.-6.), տարբեր աշխարհագրական շրջանների առանձին բնակարան-քարանձաւների եւ քարանձաւային բնակելի համալիրների ճարտարապետական եւ շինարարական լուծումները սկսում են տարբերուել իրարից եւ ձեռք են բերում ինքնուրոյն բնութագիր, այսպէս ասած՝ «ազգային դիմագծեր»⁴: Մարդը սկսում է բնական քարանձաւները մշակել, փորել, յարմարեցնել եւ բարեկարգել բնակութեան համար առաւելագոյնս պիտանի դարձնելու համար:


Հակառակ տարածուած կարծիքի, իրականում բնակելի տան զարգացում՝ պարզից դէպի աւելի բարդ ուղղագծով, գոյութիւն չունի: Ամէն ինչ կախուած էր տուեալ վայրի տիպաբանական առանձնայատկութիւններից, կլիմայական պայմաններից, կենդանական աշխարհից, որոնց ներսում մարդն ամէն անգամ փորձել է յարմարուել եւ ստեղծել ուրոյն, տիպական բնակելի տարածք:⁵ Այս շրջանում հանդիպում են բաւական կազմակերպուած ներքին տարածքով քարանձաւներ, որոնք բացի բազմակի

3 Անդ: Տես նաեւ՝ ՇԱՀԻՆԵԱՆ, Ա., Հայաստանի քարանձաւները, գիրք Ա., Երևան 2005, 22-23:

4 Անդ, 49-50:

5 «Habitat et habitation des homes de la prehistoire», *Hominides*, հունիս 2012, <http://www.hominides.com>

օջախներից, ունէին նստարանային յարմարանքներ, սալայատակուած յատակ եւ նոյնիսկ փայտեայ սիւններ⁶: Մեծ թուով կան նաեւ ամբողջութեամբ մարդու կողմից փորուած քարանձաւներ, որոնք ենթարկուած են ճարտարադիտական ընդհանուր սկզբունքի, կոնաձեւ բլրակների տեսքով, ինչպէս օրինակ՝ Կապադովկիայում կամ Իրանի հիւսիսում գտնուող բնակավայրերը (տե՛ս պատկերներ 1-3):



Նկար 1. Քանդավան (Իրան)

Ինչպէս աշխարհի գրեթէ բոլոր լեռնային գոտիներում, այնպես էլ Հայկական լեռնաշխարհում, քարանձաւային բնակավայրերի աւանդոյթը պահպանվել է հազարամեակներով եւ գոյատեւում է մինչեւ այսօր: Սկսած ճարտարապետութիւնից, շինարարական առանձնայատկութիւններից մինչեւ քարանձաւաբնակների կենցաղը, փոխյարաբերութիւններն ու կրօնական պատկերացումները, քարանձաւային մշակոյթը ձեւաւորել է ինքնատիպ մտածողութիւն եւ մշակոյթ⁷: Նոյնը կարելի է ասել նաեւ տնա-

6 Ա.Ար:

7 ՇԱՀԻՆԵԱՆ, ԱԶ. աշխ., 45:

վարման սովորույթների եւ բնակելի տարածքի կազմակերպման ու յարդարանքի առումով: Եթէ նախապէս քարանձաւային կացարանը տիպական ազդեցութիւն է ունեցել վերերկրեայ բնակելի շինութիւնների ճարտարապետական մտայղացման վրայ, ապա ժամանակի ընթացքում նկատվում է հակառակ գործընթացը. ժայռափոր բնակարանները, տաճարները, դամբարանները, ապա՝ եկեղեցիները, կրկնում են վերերկրեայ «արհեստական» կառույցների մանրամասները: Նոյն կերպ հակադարձ գործընթացով, մարդաստեղծ քարանձաւների բարենորոգման, բարեկարգման ձեւը սկսել է ուղղակիօրէն կրել բնակեցնողների աշխարհընկալման հայեցակարգի եւ հոգեւոր սկզբունքների ազդեցութիւնը⁸:



Նկար 2. Փանդոլան (Իրան)

Հայաստանի տարածքում մինչեւ ժ.թ. դար ուղղակի քարանձաւագիտական հետազոտութիւններ չեն կատարուել, չնայած պահպանուել է մեծաքանակ գիտահետազոտական նիւթ, որն ապացուցում է Հայաստանում քարանձաւային քաղաքակրթութեան գոյութեան փաստը:⁹ Քարայրներով եւ այրային բնակավայր-բնակատեղիներով հարուստ են թէ՛ Արեւելեան, թէ՛ Արեւմտեան Հայաստանի բոլոր գաւառները՝ Արգնու շրջակայքը, Սեւանի ժայռոտ եզերքները, Հրազդանի ափերը, Ախուրեանի որոշ ակունքներ, Դեբետի

եզերքները, Սանահինի մօտակայքի ժայռերը, Վայոց Ձորը, Գեղարդաձորը, Զանգեզուրի շրջանի մի շարք գիւղեր՝ Գորիսը, Խնձորեսկը, Տեղը, Քարաշէնը, Անիի շրջակայքը, Արթիկի տուֆասարերը, Բագարանից մինչեւ Մրեն տանող ճանապարհի վրա

8 Անդ, 46-47:

9 Անդ, 11:

գտնված քարայրները, Վանի արհեստական քարայրները, Ճորոխի ավազանը, Հին Բայազետի, Շիրակի, Մուշի, Սասունի, Խարբերդի, Մանազկերտի, Կապադովկիայի քարայրները:¹⁰



Նկար 3. Կապադովկիա

Հայաստանում մարդաստեղծ քարանձաւներ հանդիպում են գրեթէ բոլոր տիպի ապարներից կազմված շերտախմբերում՝ նստվածքային, հրաբխային, ձեւափոխուած: Մարդաստեղծ քարանձաւները հիմնականում փորուել են արդէն ձեւաւորուած քարանձաւներում, բարեկարգելով դրանք եւ պիտանի դարձնելով բնակութեան համար, սակայն մեծ թիւ են կազմում ամբողջութեամբ մարդու կողմից փորուած եւ ճարտարագիտական մէկ ընդհանուր սկզբունքով իրականացուած ժայռափոր կառոյցներն ու բնակավայրերը: Այսպիսի քարանձաւները հիմնականում փորուել են հրաբխանստուածքային, նստուածքային, համեմատաբար փխրուն, աւազային, աւազակաւային նստուածքային կազմ ունեցող ապարաշերտերում:¹¹

Հայկական լեռնաշխարհում այրային բնակավայրերի անընդմէջ գործածումն ու զարգացումը յանգեցրեց այն բանին, որ

10 ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ա., Այրային բնակարանից դեպի վերերկրյա բնակելի համայնք, Յաւելուած VI, 118:

11 ՇԱՀԻՆԵԱՆ, Ա. աշխ., 22-23:

միջնադարում ստեղծուեցին խոշոր այրային բնակավայրեր, անգամ քաղաքներ (Անի, Կապադոկիա, Գորիս եւ այլն), որտեղ գուգորդուում են տարբեր հարթութիւնների կիրառումը արդէն քաղաքաշինական սկզբունքների կիրառման հետ, ինչպէս՝ հորիզոնական եւ ուղղահայեաց կապերի գուգորդութեամբ ապահովում են բնակելի, արդիւնաբերական, պաշտամունքային, կենսապահովման գործառական տարածքների, պահեստաւորման, ռազմական, կապի եւ այլ այրային գոտիները, իսկ բնակելի միջավայրի ներսում, այրային սենեակների գոյութեամբ, բաժանում են բնակելի, տնտեսական, անասնապահական եւ կենցաղավարութիւնը ապահովող գոտիները:¹²




Նկար 4. Անի

1960-70-ականներին նշանակալի յայտնագործումներ են արուել Հրազդանի մերձերեւանեան շրջանում. յայտնաբերուել են տասնեակ քարանձաւներ, որ բնակեցուած են եղել մարդկութեան պատմութեան ամենավաղ շրջանից (վաղ Հին քարեդար): Նշանաւոր են Երեւանի եւ Արզնու բնակավայրերի միջեւ ընկած Հրազդանի կիրճի քարայր-բնակատեղիները, որոնք հայտնի են Երեւան-1, Երեւան-2, Զովունի, Լուսակերտ եւ այլ անուններով: Հին քարեդարեան մշակոյթի հարուստ հաւաքածու է յայտնաբերուել Երեւան-1 քարայրում (մուստերեան շրջան): Յայտնաբերուել են տարբեր գոյների ու երանգների վանակատից, կայծքարից, բա-

12 ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ա., նշ. աշխ., 120:

զալտից եւ յասպիսից պատրաստված բազմատեսակ աշխատանքային գործիքներ, որոնց թիւն անցնում է 2500-ից:¹³



Նկար 5. Աճի



Նկար 6. Աճի

13 <http://www.yerevan.am/1-301.html>

Հայաստանի այրային մշակոյթի հետաքրքիր դրսեւորումներից է նաեւ Գորիս քաղաքից հիւսիս-արեւմուտք (4կմ.), Վերիչէն համայնքի վարչական տարածքում գտնվող Հին Գորիսի քարանձաւային համալիրը՝ 130-140 ժայռափոր քարանձաւներով, որ բնակեցուած է եղել անյիշելի ժամանակներից մինչեւ 1930-40-ական թուականները (տե՛ս Պատկեր 7): Ընդհուպ մինչեւ 1930-ական թուականները այն եղել է լիարժէք բնակավայր եւ կոչվել է Հին Գորիս, յետագայում՝ Վերիչէն:¹⁴ Բնակավայրի վերջին բնակիչը այն լքել է 1940-ականներին: Քարանձաւային բնակավայրում է գտնուում նաեւ 17-րդ դարում կառուցուած եւ այժմ գործող սուրբ Նորակնունք եկեղեցին: Հին Գորիսի քարանձաւային համալիրը կարեւոր հնագիտական ժառանգություն է. փոխապակցված բնակատեղիների ցանցի ուսումնասիրութեան արդիւնքում յստակ պատկերանում է հնագույն բնակավայրը՝ իր կենցաղով, հարուստ պատմամշակութային արժէքներով: Ընդհանրապէս, քարանձաւային բնակավայրերը պատմական, մշակութային, հնագիտական, բարոյահոգեբանական չափազանց կարեւոր նշանակութիւն ունեն Գորիսի, Վերիչէնի բնակչութեան համար: Բնակիչները խիստ բարձր են գնահատում իրենց պատմամշակութային անցեալի կենդանի վկաներին, մեծ հպարտութեամբ ու հոգածութեամբ են մօտենում այրային համալիրին:



Նկար 7. Վերիչէնի քարայրային բնակատեղին

14 ԲԱԲԱՆԱՆ, Ա., Հին Գորիսի քարանձաւային բնակավայրեր, http://verishenhamaynq.blogspot.com/p/blog-page_28.html#.UWXpHhdTBPF

Ուշագրաւ է նաեւ Գորիսից ծկմ. արեւելք գտնուող *Խնձորեսկ* բնակավայրը: Հին *Խնձորեսկը* տարածուած է լեռնահովտի երկու լանջերին: Այդ լանջերին հարթ տարածութիւններ չեն եղել վերգետնեայ բնակարանների կառուցման համար, ուստի մարդիկ օգտագործելով բնական պայմանները՝ փորել են քարանձաւներ, որոնցից մէկի տանիքը ծառայում էր միւս տան համար որպէս հիմք:¹⁵ *Խնձորեսկի* այրային բնակարանների թիւը հասնում է հարիւրների:

Ինչպէս վերը նշուեց, Հայկական լեռնաշխարհի տարածքում քարայրային բնակատեղի-համալիրներ առաջանում եւ զարգանում են նաեւ միջնադարում: Դրանց շարքում առաւել աչքի ընկնող օրինակներից են Անի քաղաքի արուարձանները՝ քարանձաւային հսկայական համալիրով: Յարաբերականօրէն ամբողջական պատկերացում ունենք Անին շրջապատող Ծաղկոցաձորի, Գայլիձորի եւ մասամբ՝ Ախուրեան գետի կիրճերի արուարձանների մասին, որտեղ գտնուում են արհեստականօրէն փորուած ամենատարբեր գործառոյթների հազարաւոր քարանձաւներ՝ բնակարաններ, մատուռներ, տնտեսական նշանակութեան այրեր եւ ընտանեկան դամբարաններ, որ թուադրւում են Ժ. դարի վերջով (տե՛ս պատկերներ 4-6):¹⁶ Քննելով քարանձաւների պատկանելիութեան հարցը՝ Թ. Թորամանեանը հերքում է համընդհանուր ընդունուած կարծիքն այն մասին, թէ դրանք նախատեսուած էին քաղաքի աղքատ բնակչութեան համար: Ինչպէս ինքն է նշում, մի քանի սենեակ եւ առընթեր սրահներ, հաճախ մինչեւ երեք հարկաբաժին ունեցող ժայռափոր բնակարան ունենալու համար պակաս նիւթական միջոցներ հարկաւոր չեն եղել, քան բնակելի չէնք կառուցելու համար:

Քարանձաւային բնակարանները տարբեր տիպի էին՝ կախուած սեփականատիրոջ սոցիալական դիրքից: Դրանց հիմնական մասը մէկ սենեակից եւ երբեմն առընթեր տնտեսական սրահից բաղկացած բնակարաններ են, որոնց կողքին կային նաեւ աւելի հարուստ բնակարաններ՝ յաճախ մի քանի սենեակներից բաղկացած, կահ-կարասի եւ կենցաղային այլ իրեր պահելու համար նախատեսուած որմնախորշերով:

15 Ա.Ան:

16 АРУТЮНЯН, В., *Город Ани*, Армянское государственное издательство, Ереван 1964, 35:

17 АРУТЮНЯН, В., Զ. աշխ., 36:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Բազնայրի աջ ափին կենտրոնացած բազմաթիվ քարանձաւային դամբարանները, որ նախատեսուած էին իշխող խաւի թաղումների համար, ինչպէս օրինակ յայտնի Անեցի Տիգրան Հոնենցի գերեզմանը, որի պատերը յարդարուած էին կրօնական եւ աշխարհիկ բնոյթի որմնանկարներով:¹⁸

Քարայրային Անին ամենատարբեր նպատակների համար նախատեսուած իր բազմաթիւ սրահներով հայոց համար արդէն աւանդական դարձած քարայրաշինարարութեան փորձի զարգացման կարեւորագոյն քայլերից է, որ դեռեւս ունի համապարփակ ուսումնասիրութեան կարիք:



Նկար 8. Լասկոյի Բարանաւ (Ֆրանսիա)

Մարդկութեան պատմութեան մէջ շրջադարձային նշանակութիւն ունեցաւ «Քարանձաւային մշակոյթի» ծագման ժամանակաշրջանում գեղանկարչութեան եւ փորագրապատկերի յայտնագործումը, որ մեծ կամ փոքր մակերեսներով սկսում են ծածկել քարանձաւների ներքին պատերը: Այսօր աշ-

խարհում յայտնի են 100ից աւել քարանձաւային «պատկերասրահներ», միագոյն կամ բազմագոյն նկարներով եւ հարթապատկերներով, որ թուագրւում են միջին եւ ուշ քարեդարեան ժամանակաշրջանով: Դրանք պատկերում են խոշոր եւ միջին տարբեր տեսակի կաթնասուններ եւ խոտակերներ, գերակշռող մեծամասնութեամբ՝ որսի կենդանիներ, կան նաեւ ձիու եւ գիշատիչների նկարներ, աւելի հազուադէպ՝ թռչուններ եւ բոյսեր (Պատկեր 8): Սկզբնական շրջանում բաւական սխեմատիկ, եզրագծային, միայն մի քանի բնութագրական դետալներ շեշտող այդ պատկերները աստիճանաբար ձեռք են բերում ծաւալայնութիւն, կենդանի, անմիջական ընկալմամբ, ամբողջական, իրական վերարտադրութեամբ լուծումներ՝ ինչպէս մանր կատարուող շտրիխների, այնպէս էլ գունային երանգաւորումների օգնութեամբ:¹⁹

18 Անդ:

19 ВИА, I, 25; 25-26.

Կարելի է ասել, որ նախնադարեան քարանձաւներում յայտնաբերուած որմնանկարները, հարթաքանդակները, քարէ կամ ոսկրէ գործիքների վրայի նախշերը կամ նշանները, «արուեստի» առաջին կիրառութիւնն են մարդու կեանքում եւ յատկապես ներքին հարթարանքում: Այս պահանջը թելադրուած էր տարբեր շարժառիթներով, որ միշտ էլ, որ բացատրելի են, բայց որ միշտ ունեցել են կարեւոր կիրառական, գործնական, անգամ՝ կենսական նշանակութիւն՝ կապուած որսի յաջողութեան, տոտեմիզմի, որսուող կենդանիների ֆիզիկական ճանաչողութեան եւ վարքային յատկանիշների բացահայտման հետ, նրանց «հոգիները գերելու»՝ նրանց «տիրանալու» մոգական միտման հետ²⁰, աւելի ուշ՝ նախնադարեան կրօնական արտայայտութեան՝ անիմիզմի՝ բնութեան ուժերին եւ արարածներին ոգեղէն սկիզբ վերագրելու, դրսեւորումների հետ: Պատահական էլ, որ մարդկային պատկերները անհամեմատ քիչ են կենդանիների պատկերների համեմատությամբ, եւ արուած են աւելի նվազ ուշադրութեամբ, աւելի սխեմատիկ, պրիմիտիվ կերպով:²¹

Քարանձաւային բնակավայրերում յայտնաբերուել են ոսկրից, եղջիւրից կամ փափուկ քարատեսակներից կերտուած մանր չափերի քանդակային արձանիկներ, որ պատկերում են մայրաստուածուհուն (կամ մայր-կնոջը): Դրանց առատութիւնը եւ բնակելի ներքին տարածքում յայտնաբերուելու հանգամանքը վկայում են մարդկանց առօրեայ կեանքում դրանց կարեւորութեան մասին, որ կապված է կնոջ համայնական եւ ֆիզիոլոգիական առաջնային դերի, ինչպէս նաեւ՝ որսի նախապատրաստման կախարդանքի ծեսում ունեցած դերի հետ:²²

Ամենավաղ ժամանակներից սկիզբ առած արուեստի մէկ այլ կարեւոր տեսակի՝ զարդանախշի առաջին նմուշներում նկատելի է բնութեան մէջ հանդիպող ամենատարբեր տիպերի, գծերի, մարմինների եւ պատկերային ձեւերի ընդհանրացման, բնութագրիչ իւրայատկութիւնների, օրինաչափութիւնների հայեցողութեան, բացայայտման, ճանաչման միտում: Բնութեան «կերպարով եւ նմանութեամբ» այս զարդանախշերի վերարտադրութեան գործընթացը հանգեցրել է շրջանի, ուղիղ կամ կոր գծի, զիգզագաձեւ գծի, սիմետրիայի, ռիթմիկ կրկնողութեան մասին

20 *Всёобщая история искусств* (ВИИ), т. 1, Москва 1956, 13-14.

21 Աճղ., 33-34:

22 Աճղ., 25; ВИА, I, 24-25.

պատկերացումների ձեւաւորման: Յատկապէս բրուտադործութեան ի յայտ գալու հետ զարդանախշը ծաւալուն գործածութիւն եւ ոճական զարգացում է ստանում եւ ուղեկցում մարդուն իր առօրեայ կեանքում:

Ընդհանրապէս, քարեդարեան մշակութի առաջին շրջանում «արուեստի» առկայութիւնը եւ կիրառութիւնը կարելի է բնութագրել որպէս շրջապատող բնութեան մասին գիտելիքի, ճանաչողութեան կուտակման եւ փոխանցման միջոց՝ նոյն այդ բնութեանը դիմագրաւելու, այն ենթարկեցնելու, կախարդելով «ընտանեացնելու» նպատակով, եւ որպէս այդպիսին այն տեղ է գրտել մարդու բնակելի ներքին տարածքում:

Աւելի ուշ՝ միջնադարում առաջացած խոշոր այրային բնակավայրերի պարագայում բնական այրային բնակելի միջավայրը պահպանում է արտաքին բնահարազատութեան «անձեռնմխելիութեան սկզբունքով», որ ռազմավարական, պաշտպանական, «աննկատելիութեան» ու յանկարծակիութեան նախապայման է պարտադրում, ինչը դառնում է բնակավայրի քաղաքաշինական եւ տարածաշինական յօրինուածքի իրականացման պայման:

Հայկական լեռնաշխարհի այրային բնակելի համալիրների ներքին եւ արտաքին յարդարանքի մասին խօսելիս անհրաժեշտ է անմիջապէս ուշադրութիւն դարձնել դրանց հարեւանութեամբ, քարայրներում, լեռների լանջերին ու հարթ մակերեսներին հանդիպող այս տարածաշրջանի նախնադարեան նիւթական մշակոյթի յուշարձաններին՝ ժայռապատկերներին, որոնք իրենց ծաւալով, կատարման տեխնիկայով, նշանների բազմաքանակութեամբ ու բազմազանութեամբ աշխարհում չունեն իրենց նմանը:²³ Այս հարցը դեռեւս, սակայն, թողնելով առկախ, նշում ենք դրա կարեւորութիւնը նախնադարեան քարայրային բնակատեղիների ամբողջական ուսումնասիրութեան համատեքստում: Բաւարար չափով նիւթի եւ ուսումնասիրութիւնների բացակայութեան պատճառով, այս թեման թողնում ենք իբրեւ առանձին ուսումնասիրութեան առարկայ:

Հայկական լեռնաշխարհով մէկ տարածուած այրային յօրինուածքների տիպաբանական առանձնայատկութիւնները, դրանցում առկայ գործառական կապերի ապահովման սկզբունքները,

23 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Հ., Հայկական ժայռապատկերների եւ Հիմ աշխարհի գրային համակարգերի ծագումնաբանական առնչությունները: Եգիպտական հիերոգլիֆիկ գիր, Ի Բագմավէյ, 2008, քիւ 1-2, 2-3:

չին-տեխնիկան եւ այլն, ինչպես նաեւ դրանցով պայմանաւորուած կենցաղավարութեան սկզբունքների բացայայտումը թոյլ են տալիս հաստատել, որ բոլոր յայտնի այր-բնակարան-բնակավայրերը մէկ մշակոյթի տիրոյթում են, տեղական ծագում ունեն եւ յատուկ են հայի աշխարհընկալմանը եւ ստեղծուել ու շահագործուել են նրա կողմից:

ԲԱԳՐԱՏ ԳԻՒԼԽԱՍԵԱՆ